

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ  
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ\*

Բանասիր. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈՔՅԱՆ

1

Մանուկ Աբեղյանի կոթողային աշխատություններում («Հայ ժողովրդական վեպ», «Հայ վիպական բանահյուսություն») հանգամանորեն քննված ու մեկնաբանված են մեր ազգային վեպի ծագման, ձևավորման ու տարածման հետ կապված գրեթե բոլոր առանցքային հարցերը, և թվում է, թե այդ առումով որևէ սրբագրություն հանդգնություն կլիներ: Երկար ժամանակ այդ համոզմանն էինք նաև մենք, մինչ կրկին ու կրկին կարդում էինք Մ. Աբեղյանի գրած պարզորոշ տողերը. «Մեր այս նոր վեպը ծնունդ է Ասսունի... <վեպը> զարգացել է այդ տեղի (այսինքն՝ Սասունի – Պ. Հ.) միջնադարյան IX–XIII դարերի սլամուլթյան հիման վրա... Սկիզբն առնելով Սասունում՝ պատմվում էր Բաղեչի և Մշո կողմերում, իլաթում և ասլա Բուլանիում, որտեղից անցել էր դեպի հյուսիս՝ Արճեչ և Կաղզվան, ուր XVIII դարում արդեն կապված է եղել որոշ տեղի հետ: Այնուհետև դա մտել է Ալաշկերտ և Այրարատ, էջմիածնի դավառը, ուր տեղացիներն արդեն յուրացրել են և արևելյան բարբառով են պատմում: Վեպը ընթացել է և Արագածի լանջերում, Աբարանում և Քավառում: Մյուս կողմից՝ Շատախի, Ռշտունիքի ու Մոկաց կողմերում վեպն ավելի կենդանի է եղել և անցել է Վան՝ կապվելով Մհերի գուան հետ, և այնտեղից Աբաղայի գաշտով մտել է Պարսկահայք, հատկապես Խոյի, Սալմաստի և Մակվա կողմերը, ուր նույնպես ցույց են տալիս վեպի գործողության տեղերը»<sup>1</sup>:

Եզրակացությունը, որ վեպն Արևելյան Հայաստան է ներթափանցել XVIII դարից հետո միայն, այսինքն՝ XIX դարում, արևմտահայության հոծ զանգվածների գաղթի տարագրության հետ կապված, անկոծկելի իրողություն է: Նախքան Հայ ժողովրդական վեպի Արևելյան Հայաստան ներթափանցելու ժամանակը որոշելը, Մ. Աբեղյանը կատարել է հետազոտական ու ընդհանրապես տեղական ու մանրակրկիտ աշխատանք՝ անձամբ շրջագայելով Արևելյան Հայաստանի գրեթե ողջ տարածքում և որոնելով

\* Կարդացված է ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի դիտական նստաշրջանում՝ նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու հիշատակին, 1997թ. հունիսի 4-ին:

1 Մ. Աբեղյան. Երկեր. Ա, Երևան, 1966, էջ 328–329:

«Սասնա ծռերի» հետքերը: Արդյունքների մասին պատմում է գիտնականի գառը խոստովանությունը. «Տողերիս գրողը 1890 թվի հունիսի սկզբներին գնաց էջմիածին և այնտեղից իր նախկին աշակերտներից մեկի հետ սկսեց Արադածի շուրջը պտտել ժողովրդական բանահյուսության նյութեր ժողովելու և առանձնապես մեր Վեպի վարիանտներ որոնելու: Բայց հաղիվ մի քանի գյուղ պտտելուց հետո, հիվանդության պատճառով ստիպվեց Կոչ գյուղից վերադառնալ էջմիածին:

Նույն ամառը նա եղավ Նախիջևանի Աստապատ գյուղում, Երնջակի մի քանի գյուղերում՝ Փորագաշտ, Նորս և այլն: Ապա նա գնաց Հին Զուղա, Աղա, Ագուլիս, Քաղաքիկ կարծելով թե հին Գողթան վիպասանների սերունդներ կգտնի այդտեղ: Այնտեղից անցավ Մեղրի, պտտեց Ղափանի մի քանի գյուղերը, եղավ Հալիձորում, Տաթևում, Գորիսում՝ կարծելով թե քաղերի համբավ վայելող այդ վայրերում կգտնի հայ ժողովրդական վեպը: Բայց ավա՛ղ, ո՛չ մի տեղ դրա հետքը չերևաց, և մինչև օրս էլ այդ կողմերից վեպի ո՛չ մի վարիանտ երևան չեկավ և, ընդհանրապես, չափազանց քիչ ժողովրդական երգեր...»<sup>2</sup>:

Այսպիսի անվերապահ հայտարարությունից հետո, թվում էր, թե ավելորդ է XIX դարից առաջ հայ ժողովրդական վեպի արձագանքներ որոնել Արևելյան Հայաստանում: Սակայն նույն Մ. Աբեղյանի ուրիշ գիտարկումներ և վիճաբան մի հիշատակարան պարտազբեցին սրբագրումներ կատարել մեծ հայագետի եզրահանգման մեջ:

## 2

Արադած լեռան հյուսիսային լանջին, 1201թ. Զաքարե ամիրսպասալարի կառուցած Հառիճո Ս. Աստվածածնի մենաստանի կամ վանքի կաթողիկե եկեղեցու դրսի տաճարում (ղավթում), որն աչքի է ընկնում ճարտարապետական զարմանալի հորինվածքով, հյուսիսային պատի վրա, Հայոց ՈԶԴ կամ քրիստոնեական 1235թ. փորագրված է տռաջին հայացքից սովորական մի արձանագրություն, որի նմաններն անչափ շատ են: Համազասպ վարդապետի վանահայրության օրերին Ասնասար և Բաղասար եղբայրները Նորաշենիկի՝ իրենց սեփական միջոցներով գնած այդին նվիրում են Հառիճո վանքին, իսկ վերջինիս միաբանները խոստանում են նրանց ծնողների և եղբայրների համար սահմանել տարին տասն օր պատարագ, որոնք կատարվելու էին Աստվածածնա տոնին հաջորդող շաբաթներին:

Այս վիճաբան վրա առաջինն ուշադրություն է դարձրել քննախույզ պատմաբան Հովհաննես Շահաթունյանցը (1799 - 1849) և վերծանելով՝ ղեկավարել իր պատմահնախոսական մեծարժեք աշխատության Հավելվածում: Ահա մեզ հետաքրքրող այդ արձանագրությունը.

2 Նույն տեղում, էջ 533:

«Կամաւն աստուծոյ ես Սանասար և Պաղտասար որդիք Խուպասարին ի յառաջնորդութեան հար Համազասպայ ընծայեցաք սուրբ ուխտիս զմեր հայրենի դրամագին այգին որ ի Նորաշին... ով հակառակ կայ կամ խըսմի մերոյ կամ ատարաց, Ազովս առցէ ի տեսունէ Յիսուսէ. և հայրս և միաքանքս սահմանեցին որ յետ Աստուածածնին ժ ար պատարագ. Բ-ն Խուպասարին, Բ-ն Կիմայթին, Բ-ն Յովհաննէսին, Դ-ն Սանասարին. ով զյիշատակս խափանէ դատի ի Քրիստոսէ, ամէն: Հաստատեցաւ կտակս ի կամս Աստուծոյ. ի թվիս ՈՁԴ (1235)»<sup>3</sup>:

Տասնչորս տարի անց, նույն արձանագրութեան առավել խնամված ու սրբազրված օրինակը հրատարակում է Աբել վարդապետ Մխիթարյանցը՝ ցուցաբերելով նախանձելի ջանք և ուշադրություն: Ծնորհիվ այս երկրորդ վերձանութեան՝ արձանագրութեան բնագրում կատարվում են բազմաթիվ ուղղումներ. Աբել վարդապետը լրացրել է մոռացված բառերն ու տառերը, ուղղել ոչ ճիշտ ընթերցումները: Վիճաբարի հետագա ուսումնասիրողները՝ Ղ. Ալիշանը<sup>4</sup> և Կ. Կոստանյանցը<sup>5</sup>, առաջնորդվել են նրա հրատարակութեամբ՝ գրեթե նույնութեամբ արտագրելով այն: Տարիներ առաջ մենք խնդրեցինք հանգուցյալ վիճաբարեւոյ Ս. Ավագյանին տեղում ստուգել այդ արձանագրութեան՝ Ա. Մխիթարյանցի հրատարակած բնագիրը. նա հավաստիացրեց, որ Մխիթարյանցը հարազատութեամբ է ընթերցանակել վիճաբարը, և տարակուսանքի սլատճառ չկա: Այդ էլ մեջ ենք բերում ստորև՝ կատարելով միայն մի ուղղում. «Կամսայ» վրիպակը Շահաթունյանցի հետևութեամբ կարդալով «կամս Աստուծոյ»:

«Կամաւն աստուծոյ ես Սանասարս և Բաղտասարս՝ որդիք Խուպասարին ի յառաջնորդութեան հայր Համազասպայ ընծայեցաք ի սուրբ ուխտս զմեր հայրենի դրամագին այգին որ ի Նորաշինիկ, սրտով. ով հակառակ կայ կամ ի խըսմի մերոյ կամ յատարաց, Ազովս առցէ ի Տեսունէ Յիսուսէ. և հայրս և միաքանքս հաստատեցին, որ յետ Աստուածածնին ժ ար պատարագ. Բ ար Խուպասարին, Բ ար Կիմայթին, Բ Յովհաննէսին, Դ Սանասարին. ով զյիշատակս մեր խափանէ, դատի ի Քրիստոսէ, ամէն: Հաստատեցաւ կտակս ի կամս Աստուծոյ. ի թուիս ՈՁԴ»<sup>6</sup>:

3 Յ ո վ հ ա ն ն է ս Շ ա հ խ ա թ ու ն ե ա ն ց . Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ . հ . երկրորդ, էջմիածին, 1842, էջ 265: Այս նույն տարի տպագրվել է արձանագրութեան մի երկրորդ վերձանութիւն ևս (տե՛ս Ս ա ր գ ի ս վ . Ջ ա լ ա լ ե ա ն ց . Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան . մասն Ա, Տփղիս, 1842, էջ 215), որն աչքի է ընկնում աղավաղումներով (ինչպես, օրինակ, «Ընծայեցի սուրբ ուխտիս... այգին որ ի Նորաշէն ի կարթ... խըսի մերոց... Կիմայթին... հաստատեցաւ Կիրարսի կամաց թուին ՈՁ-ին») և մոռացված (չվերձանված) բառերով (ինչպես՝ «ի տեսունէ Յիսուսէ»): Այսպիսի վերձանումն ուսումնասիրութեան համար պիտանի է:

4 Ղ . Ա լ ի շ ա ն . Շիրակ . Վենետիկ, Ս . Ղազար, 1881, էջ 163:

5 Կ . Կ ո ս տ ա ն յ ա ն ց . Վիճական տարեգիր . Ս . Պետերբուրգ, 1913, էջ 79-80:

6 Ա Ր Է Ն Վ ա Ր Ղ ա Վ ե տ Մ ի ի թ ա Ր ե ա ն ց . Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ . Տփղիս, 1856, էջ 75-76: Իրականում, աշխատութիւնը պատրաստ է եղել ավելի վաղ, և գրաքննութիւնը այն տպագրութեան է թույլատրել 1852թ . դեկտեմբերի 27-ին:

Մեզ տարակուսանքի տեղիք են տալիս խուլացած սարի որդիների անունները: Արձանագրութեան սկզբում նրա որդիները երկուսն են՝ Սանասարը և Բաղդասարը, իսկ վերջում անհետանում է Բաղդասար անունը, և հանդես է գալիս Հովհաննես անունով որդին, որը չդիտես նոր անուն է, թե՞ Բաղդասարի երկրորդ անունը: Դրանից բացի՝ բոլոր հանգուցյալների համար, ինչպիսիք են հայրը, մայրը և Հովհաննես եղբայրը, սահմանվում է երկուական օր պատարագ, իսկ ահա միայն Սանասարի համար՝ չորս օր: Դրանից արդյոք չպիտի՞ եզրակացնել, որ կամ Բաղդասարի անունը անուշադրութեան պատճառով դուրս է մնացել բնագրից, և չորս օր պատարագը նվիրված պիտի լիներ Սանասարին ու Բաղդասարին, կամ էլ Սանասարն ունեցել է կրկնակ անուններ՝ միաժամանակ Սանասար ու Բաղդասար, և դրանց տակ պետք է տեսնել մեկ մարդու: Սուրբ Հովանականը, սակայն, հետևյալն է. Բաղդասարի անունը, փորագրողի անփութութեան պատճառով, դուրս է մնացել բնագրից, և խուլացած իրականում ունեցել է երեք որդի՝ մեկն ավելի երեք՝ Հովհաննես անունով, իսկ երկուսը՝ նրանից փոքր և, գուցե թե, երկվորյակներ, որոնց, ինչպես և հայ ժողովրդական վեպում, մկրտելիս կոչել են Սանասար և Բաղդասար:

## 3

Թե ովքե՞ր են Սանասարն ու Բաղդասարը և ի՞նչ հետք են թողել Արևելյան Հայաստանի պատմութեան մեջ, Շիրակի և մասնավորապես Հառիճո մենաստանի XIII դարի վիմագրերն ու նույն ժամանակների գրավոր աղբյուրներն այլ տեղեկութուններ չեն ընձեռում, ուստի առայժմ մի կողմ թողնելով որդիներին՝ զբաղվենք ծնողներով, մասնավորապես նրանց հոր անձով ու գործով:

Խուլացած Թանթ դեմք է և գործել է հայոց ու վրաց իրականութեան մեջ, Թամարի թագավորութեանը նախորդող տասնամյակներին (XII դարի 70–80-ական թթ.) ու մասամբ էլ հետո: Սգգութեամբ նա հայ չէր և ոչ էլ վրացի, այլ ղփչաղ, հեռավոր ժառանգներից մեկը չորս տասնյակ հազար այն թուրքալեզու հեթանոս վաչկատունների, որոնք վրաց Դավիթ Շինարար (1089–1125) թագավորի օրոք ապաստան գտան Վրաստանում և որպես վարձկան զինվորներ ծառայում էին վրաց թագավորներին՝ ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղվող կռիվներում: Մեկգարյա շփումը քրիստոնյա հայերի ու վրացիների հետ շատ բան է փոխում նրանց կենցաղում: Մի մասը ձուլվում է տեղացիների մեջ, ուրիշներն ընգործակում են տեղական բարձր ու սովորույթները և ի վերջո քրիստոնեություն ընդունում ու դառնում ջերմեռանդ հայեր կամ վրացիներ: Շատերն էլ հետագա-

Տարբերակվող վերածանություն տե՛ս Հ. Եղիազարյան. Հառիճա վանքը և նրա վիմագրությունը. — «Էջմիածին», 1957, Ա, էջ 61: Արձանագրությունների վերաբերյալ տե՛ս նաև Ե. Տեր-Մինասյան. Հառիճա վանքի արձանագրությունների առթիվ. — «Էջմիածին», 1958, հունվար, էջ 41–45, դեկտեմբեր, էջ 52–55:

յուրև շփվելով սելջուկ-թուրքերի ու մոնղոլ-թաթարների հետ՝ խառնվում են նրանց ու անհետանում պատմության ասպարեզից:

Անձամբ խուլասարը՝ պահպանելով հանդերձ ցեղային գիտակցութունը, ի վերջո տեղի է տալիս և արդեն իր երեխաներին անվանակոչում հայ առօրյայում տարածված անուններով ու մկրտում քրիստոնեական ծեսով: Խուլասարին երկու անգամ հանդիպում ենք Ստեփաննոս Օրբելյանի «Պատմության» էջերում, մինչ վերջինս վիպում է իր նախնիների՝ Օրբելյան տոհմի իշխանների հերոսական գործերը, կրած հալածանքները Վրաց աշխարհում և տոհմի անդամների մեծ մասի կոտորածը վրաց թագավորների հրամանով:

Գեորգի III-ի գահակալության շրջանում սուր տարածայնություններ են սկսվում թագավորի ու նրա էրիսթավների (իշխանների) միջև: Դավիթ V-ի կարճատև գահակալությունից ու վաղաժամ մահվանից հետո (1155թ.), ըստ ավանդական կարգի, գահը ժառանգելու էր վերջինիս որդի Դեմնան: Բայց որովհետև արքայազնը դեռ մանուկ էր ու անպատրաստ, գահը վստահվում է հորեղբորը՝ Գեորգի III-ին: Իշխելով ավելի քան քսան տարի՝ Գեորգին չէր պատրաստվում գահը գիջել օրինական աիրոջը, ընդհակառակը՝ նա ամեն կերպ աշխատում էր չեզոքացնել Դեմնային և նախապատրաստել իր դստեր՝ Թամարի գահակալությունը: Գեորգ այս ամենից՝ վրաց հեղինակավոր իշխանների մեծ մասը 1177թ. ապստամբություն է բարձրացնում Գեորգի III-ի դեմ: Ընդդիմադիրների մեջ էին նախ՝ Օրբելյանները, որոնց վստահված էր վրաց զորքի ամիրսպասալարությունը կամ գլխավոր հրամանատարությունը, այնուհետև՝ վրացի ու հայ հզոր իշխաններ, որոնց անունները հաղորդում է մեզ Ստեփաննոս Օրբելյանը. «Եւ էին միաբան ամենայն գլխաւորք և ազատք Վրաց ընդ Իվանէի և ամենեքեան համագունդ դիմեալ եկեալ էին առ նա յԱղարակն դարապաս՝ Քարթլիս հէրիսթաւքն և Ղաւրղաւրայքն և Զաւախուրքն. Կախայն և որդիք իւր և Կամրազէն մեծ և Զաղել Մեմնայն և Տաշրացիքն և Կայենեցին Հասան և Անեցին Գրիգոր Ապիրատեանց, որոց զօրքն էին թուով աւելի քան 430000»<sup>7</sup>:

Սկզբներում Գեորգի III-ը խիստ նեղվում է, գրեթե մենակ մնում, ապահովության համար փակվում Տփղիսի բերդում և օգնության կանչում ղփչաղ վարձկաններից կազմված մի զորախումբ, որի հրամանատարը մեզ հետաքրքրող խուլասարն էր: Ստեփաննոս Օրբելյանը ուշագրավ վկայություն ունի նաև այդ մասին. «Իսկ թագաւորն Գէորգի միայն առանց զօրաց կայր ի Տփղիս, և կոչէր առ ինքն զԽփչախ ոմն խուլասար անուն. և եգիտ արս իբր հինգ հազարս. և այլ ոչ ունէր օգնական զօրք»<sup>8</sup>:

Այնուհետև ապստամբները հապաղում են. Իվանե Օրբելյանը, կարծես, չի վստահում իր դաշնակիցների հավատարմությանը և վարձկան զոր-

7 Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 384:

8 Նույն տեղում:

քեր է փնտրում: Դրանից օգտվում է Գեորգին և աստիճանաբար իր կողմը գրավում ապստամբ իշխաններին: Մեկը մյուսի հետևից նրա մոտ են վերադառնում Գամրակել Թորեցին, Գրիգոր Ապիրատյանը կամ Մաթիստրոսյանցը, Սարգիս Զաքարյանցը: «Որք երթային առ Դէորգի,— նկատում է Օրբելյանը,— մեծաւ պատուով ընդունէր և անչափ պարգևօք խրախացուցանէր, և զամենայն Հայրենիս և փարթամութիւնս Օրբէլեանց խոստանայր տալ նոցա»<sup>9</sup>:

Ի վերջո, մենակ են մնում Իվանե Օրբելյանն ու Դեմնան և ամրանում Շամշուլտե ու Լոռե բերդերում: Տեական ու խիստ պաշարումից հետո Գեորգին կարողանում է գրավել Շամշուլտեն, բայց Լոռե բերդը մնում է անառիկ: Ամիսներ անց հուսահատվում են նաև պաշարվածներից շատերը և իրար հետևից, գիշերները, ծածուկ, ամրոցի պատերից պարաններով իջնելով՝ անցնում են Գեորգի III-ի բանակը: Թագավորն այժմ ավելի քան վստահ էր և գիմում է վերջին խորամանկ քայլին. վրաց իշխանների անուսից նամակ է հղում Իվանեին և հնազանդություն ու հաշտություն առաջարկում՝ երգվելով ներել նրան: Պատմական աղբյուրները վիպական գույններով են նկարագրել այդ գիպվածը<sup>10</sup>:

Դեպքերի հետագա ընթացքը թեպետև պարտագրում է նրան դադարեցնելու անիմաստ արյունահեղությունը և ընդունելու հակառակորդի հաշտության առաջարկը՝ հանձնվելով մութ ու անհայտ ճակատագրին, բայց մինչև վերջ էլ մնում է վեհ ու առաքինի:

Գեորգին՝ արքայազն Դեմնային ու զորավարին ջերմ ընդունելություն է ցույց տալիս և շուտով էլ դրժում ուխտն ու երդումը: Նա փորել է տալիս Իվանեի ու Դեմնայի աչքերը և ներքինացնում, որպեսզի «մի լիցի

9 Նույն տեղում, էջ 385:

10 Նույն տեղում, էջ 387-388: Թագավորի նամակը կապելով նետի ծայրին՝ գրսից արձակում են դեպի ամրոց: Նույն ձևով էլ Իվանեն իր պատասխանն է ուղարկում իշխաններին: էպիկական ոճով են հյուսված երկու նամակներն էլ, և զգացվում է ժողովրդական վեպի որոշակի ազդեցությունը այդ գրվագի և Ստեփաննոս Օրբելյանի պատմելաձևի վրա: Մասնավորապես Իվանեն գրում էր.

Ո՛վ դեղեպուլք իմ սիրելի՛	Յանանց գեհեմն պապակի
Մեծ և հզոր իշխանք բարի,	Եւ ի դիւաց գունդն դասի:
Ես Իվան՛՛՛ Օրբէլեցի՛	Ես անցաւոր մարդ ցնդելի՛
Ընթերցայ զգիրս ձեր խրատի:	Վասն առօրեայ կենաց պատուի,
Բայց չեմ հաւան այս խորհրդի՛	Չկարեմ կոխել գուխտն որ եղի
Ձոր գրեցիք յայսմ թղթի,	Ստել գերդումն սոսկալի:
Մարդ որ կենօքս այս զբաղի՛	Այլ մեռանիմ յայսմ բանի՛
Թողու զաւանդն տէրունի:	Երթամ առ Տէրն ցանկալի,
Ուխտադրու՛՛ ինքն լինի՛	Առնում ստացուած անճառելի՛
Առնու զբաժինն ուրացողի,	Որ յունեք՛ ոչ կողոպտի:

Այս հանգավոր նամակը առաջին հերթին բնութագրում է հեղինակին Իվանե Օրբելյանին, որպես բարձր առաքինությունների և ուժեղ կամքի տեր պետական գործչի ու զորավարի, որի համար արդարությունն ու ճշմարտությունը, պարտքի գիտակցությունն ու արժանապատվությունը անչեղ համոզումներ էին, որոնց պաշտպանության համար պատրաստ էր զոհարելու կյանքը:

ժառանգ ի նմանէ», սպանել տալիս Իվանեի որդուն, եղբորը, եղբորորդուն և ողջ ազգատոհմը՝ արու զավակներին ու կանանց՝ ոմանց ջրասուլյզ անելով, ոմանց էլ քարաժայռերից նետելով անդունդը: Հրամայում է, այնուհետև, վրաց պատմագրքերից ջնջել Օրբելյան տոհմի Հիշատակը, որպեսզի ոչ ոք չիմանա ապստամբության իրական պատճառը: Այս դաժանությունների գլխավոր գործադրողը զփչաղ Խուլասարն էր:

Գեորգի թագավորը Օրբելյանների կալվածքներն առատորեն նվիրում է իր կամակատարներին, Օրբելյանների թշնամիներին: Կալվածքների մի մասն էլ բաժին է ընկնում Խուլասարին. «...և մատոյց զնա ի գահ իշխանութեան նոցա, և եզ սպասալար ամենայն վրաց»<sup>11</sup>: Խուլասարի ամբարտաճարությունը շարունակվեց ինը տարի: 1186 թ. Թամար թագուհին սպասալարությունը շնորհեց Սարգիս Զաքարյան Մեծ իշխանին՝ միաժամանակ, իբրև ժառանգական սեփականություն, նրան հանձնելով Լոռի գավառը և համանուն ամրոցը: Դրանից հետո արդեն Խուլասարի անունը չի երևում պատմության տարեգրքերում:

## 4

Բարություն և առաքինություն հանդես չարի և բռնության նահանջելու, չարագործի ու բռնակալի՝ աներևակայելի արագությունը վերափոխվելու և վերածնվելու խնդիրը մշտապես եղել է մեծ գրողների ու բարոյագետների ուշադրության կենտրոնում: Այդ մասին խոսուն օրինակներ են տրամադրում համաշխարհային պատմության տարեգրքերը: Նույնը, մեր կարծիքով, կատարվել է նաև Խուլասարի հետ: Իբրև վարձկան զորական ծառայելով վրաց Գեորգի III թագավորին, իսկ ժամանակ անց, երբ արդեն ավարտվել էին թե՛ մարտերը և հաստատվել խաղաղություն, երբ Իվանե

11 Նույն տեղում, էջ 391: Այս դեպքերից մեկ տարի անց (1178թ.) Դավիթ Քորայրեցին Գրիգոր Նաղիանդացու և Գրիգոր Նյուսացու ճառերի իր մեկնության հիշատակարանում աչառու ձևով է ներկայացնում կատարվածը, ամեն բանում մեղադրում միմիայն Իվանե Օրբելուն: Թերևս, նրա համար, որ Տփղիսի ամիրապետ Քուրդ Արծրունին ու համախոհ Հայ իշխանները, որոնք փրկեցին վրաց թագավորին, նրա համակրանքը չհաժանեցին էին (մանրամասնությունները տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր. Երևան, 1988, էջ 223-225): С. Т. Е р е м я н. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках.- Երևանի պետ. համալսարանի աշխատ., հ. 23, 1946, էջ 389-421: Հմմտ. Հ. Գ. Մ ա Ր Գ ա Ր Յ Ա Ն. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, 1980, էջ 147-195: Իվանե Օրբելին Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զավակներից էր, ինչպես և իր հայրը՝ Սմբատը, և պապը՝ Մեծն Իվանե սպասալարը: Ապացույցը՝ այդ տոհմի սերտ կապերը և ավանդական ուխտադնացությունները Սանահնի վանք: Օրբելյաններն իրենց տիրած բոլոր գավառները՝ բնակչությամբ ու բնակավայրերով հանդերձ, վախժ էին տվել Հիշյալ վանքին, և 1173թ., հերթական ուխտադնացության ժամանակ, նույնը կրկին վավերացնում էր Իվանե Օրբելյանը, իսկ վանքի միաբանները նրանց մեղքերի քավության համար ամեն տարի անխափան մատուցում էին մեկ քառասունք պատարագ: Տե՛ս Պ ա Ր Ո Ւ Ե Ր Մ ու Լ ա Ղ Յ Ա Ն. Հայաստանի վրացերեն արձանագրությունները. Երևան, 1977, էջ 137-150:

Օրբելյանն ու թագավորը սրբորդ պապյան էին գրել, շահել կամ ամեն ինչ կորցրել ու, կարծես, մոռացել էին թշնամանքը, թվում է, հոգեկան խաղաղությունն առմիշտ լքում է ինուպասարին: Առանց անձնական գրգռապատճառի ու խղճի խայթի կոտորելով և կուրացնելով Իվանե Օրբելու ողջ ընտանիքն ու աղագատոհմը, որպես վարձատրություն ստանալով նրա կալվածքներն ու զբաղեցրած բարձրագույն պաշտոնը՝ Հայոց և Վրաց զորքերի գերագույն հրամանատարությունը, բայց մեկ-երկու տարի անց պաշտոնն ու կալվածքները զիջելով Ջաքարյան եղբայրներին, — այդ ամենը պետք է որ հոգեպես ցնցեին թեկուզ և հեթանոս ինուպասարին և պարտագրեին իր իսկ ոճրագործությունից ահարեկված՝ ներքնապես խաղաղվելու և տանջանքներից փրկվելու ուղիներ որոնել: Միակ ճանապարհը քրիստոնեությունն էր: Քրիստոնեություն ընդունելու հետ միասին, հավանական է, ինուպասարն իր ընտանիքով և ծառաներով փոխադրվում է Հայաստան, Շիրակ՝ Արագածի փեշերին փոխած Հառիճ գյուղի մերձակայքը, որ հները Ղփչաղ էին կոչում, իսկ նույն տեղում գործող մենաստանը՝ Ղփչաղի վանք:

Վիմագիր արձանագրությունները XII-XIII դդ. սահմանադրում այստեղ են ցույց տալիս ինուպասարենց այդին, որի բաժիններից մեկը տարիներ անց, սեփական միջոցներով դնում է մի խոնարհ քրիստոնյա և նվիրում Հառիճավանքին՝ մենաստանի պատերին թողնելով իր համեստ արձանագրությունը. «Ես Տրիսուր մեղուցեալ ծառա Քրիստոսի ի քրտանց իմոց գնեցի զինուպասարենց այգոյն չորիցն մին. և ետու ի սուրբ ուխտս. և հայր Համագասպս սահմանեաց որ ի տաւնի Անդրէի առաքելոյն Գ աւր պատարագ առնեն. ով խափանե, դատի ի Քրիստոսէ»<sup>12</sup>:

Այստեղ են ծնվում ինուպասարի և նրա տիկնոջ՝ Կիմայթի երեք զավակները, ու երեքին էլ նրանք մկրտում են հայկական ծեսով. անվանակոչում՝ Անասար, Բաղդասար և Հովհաննես: Ժամանակ անց, ինուպասարը (թե՞ իր որդիները) ձեռք է բերում նոր կալվածքներ, մասնավորապես մի այդի՝ մերձակա Նորաշինիկ գյուղում, որը 1235թ. որդիները նվիրաբերում են Հառիճո վանքին<sup>13</sup>: ինուպասարի որդիների անուններն էլ՝ Անասար և Բաղդասար, գրավեցին մեր ուշագրությունը:

Հայոց եկեղեցու գիրկն անցած ուրիշ ղփչաղներ էլ կային այդ կողմերում, բայց նրանք իրենց զավակներին մկրտել տալով Հայոց եկեղեցում՝ գրեթե միշտ անվանակոչում էին իրենց ավանդական անուններով: Օրինակ՝ Չաղանի որդի Եղիսություն և նրա տիկինը՝ Խողլուն իրենց զավա-

12 Ար էլ վարդապետ Մխիթարեանց. Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ, էջ 76, նաև՝ Ղ. Ալիշան. Շիրակ, էջ 163:

13 ինուպասարենց «Հայրենի դրամագին այգու» մասին տե՛ս մեր քննության նյութ. ծառայող արձանագրության մեջ (նույն տեղում, էջ 75):



կի անունը դրել են Ապաշե<sup>14</sup>: Բայց այդպես չի վարվում խուլասարը. նա իր որդիներին (գուցե և երկվորյակներ) կոչում է հայկական անուններով, այն էլ ոչ ավանդական – քրիստոնեական, այլ՝ վիպական՝ մեծին կոչելով Սանասար, փոքրին՝ Բաղդասար: Այդ անուններն են կրում նաև հայ ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» դյուցազունները: Խուլասարին, իբրև զորականի, պիտի կարծել, դրավել են հայոց ազգային հերոսները, և նա իր համակրանքն ու պաշտամունքը նրանց նկատմամբ արտահայտել է այդ ձևով:

Ի՞նչն է հիմքեր տալիս նման ենթադրության:

## 5

Ուշի-ուշով ծանոթանալով ազգային գրավոր աղբյուրներում արձանագրված անձնանուններին, որոնք գործածական են եղել ընդհուպ մինչև XIII դարը, մենք համոզվեցինք, որ Սանասար և Բաղդասար անձնանուններն առանձին-առանձին հազվադեպ են գործածվել, իսկ միասին, բացառությամբ ժողովրդական վեպի ու խնդրո առարկա արձանագրության, ոչ մի անգամ (այլ օրինակներ չենք կարողացել գտնել):

Սանասար անվան առաջին և հնագույն հիշատակությունը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ է (Ա, իդ [իգ] և Գ, ծե), այն դրվագներում, ուր քերթողահայրն անդրադառնում է Աղձնյաց բռնչխության և Արծրունյաց ու Գնունյաց նախարարական տների ծագմանը՝ համառոտակի վերհիշելով Աստվածաշնչից քաղված մի հնագույն զրույց (Եսայի, ԼԷ, 38 և Դ Թագաւ., ԺԹ, 37):

«Պատմության» հետագա էջերում, երբ կրկին խոսք է բացվում Աղձնյաց բռնչխության մասին, Մովսես Խորենացին վերստին հիշում է Սանասարին, բայց արդեն Սարասար ձևով (տե՛ս Բ, ը):

Հարկավ, V դարում դրի առնված հնօրյա զրույցներն Ազրամելեքի և Սանասարի մասին որոշակի դեր են խաղացել հայ ժողովրդական վեպի առաջին ճյուղի հերոսների՝ երկվորյակ եղբայրներ Սանասարի ու Բաղդասարի անվանակոչության մեջ, քանի որ Գ. Սրվանձտյանցի գրի առած պատմումն էրկվորյակ եղբայրները, գուցե և Աստվածաշնչի ու Խորենացու ազդեցության տակ, կոչվում են Աբամելիք ու Սանասար, ըստ որում Աբամելիքն ավագ եղբայրն է, իսկ Սանասարը՝ կրտսեր<sup>15</sup>: Թե ե՞րբ և ի՞նչ դրդապատճառների ազդեցության տակ են փոխվել հերոսների անուններն ու դերերը՝ Սանասարը դարձել է ավագ եղբայրը և ստանձնել առավել

14 Տե՛ս Ա բ ե լ վ. Մ խ ի Թ ա ռ ե ն ց. նշվ. աշխ., էջ 67, նաև՝ Հ. Շ ա Հ խ ա Թ ա. ն յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 264, 1334թ. վիմագիրը:

15 Աստվածաշնչում (Եսայի, ԼԷ, 38 ևն) եղբայրները կրում են Ազրամելեք և Սարասար անունները, ինչպես Խորենացու «Պատմության» մեջ: Սրվանձտյանցի գրի առած պատմումը տե՛ս Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ. Կ. Պոլիս, 1874, էջ128, 137:

Հեղինակավոր դյուցազնի պարտականություններ, իսկ Արամելիքը՝ փոքր եղբոր դերը, և արդեն ուրիշ ասացողների պատումներում անվանակոչվել - Բաղդասար, դժվարանում ենք բացատրել ու չենք էլ ուզում ենթադրություններով տարվել: Ինչպես երևում է, դա կատարվել է ոչ ուշ, քան X-XI դդ., երբ վեպն արդեն դուրս էր եկել Սասունի ու Մշո դաշտի դյուզերից և պատմվում էր աշխարհադրական ու ազգագրական հարևան շրջաններում, իսկ այնուհետև ընտանի դարձել նաև արևելահայություն համար: Խուլպասարի լսած պատումի մեջ վեպի հերոսները՝ Սասունից սերած այդ դյուցազուհիները, արդեն կրում էին նոր անուններ՝ Սանասար և Բաղդասար:

Երկրորդ անգամ Սանասար անունը հանդիպում է արաբական աղբյուրներում, 638թ., և կրողը Սասունի իշխաններից է, երրորդ անգամ՝ Ավանց գյուղաքաղաքում, շատ ավելի ուշ, 1600թ.<sup>16</sup>:

Բաղդասար անձնանունը ծագումով սուրբդրային է, այդպես է կոչվել Բաբելոնի վերջին թագավորը (մ.թ.ա. 538): Հայերն այն սկսել են գործածել XV դարից (1445թ.) և առաջիններից մեկը գավառացի «Հովհաննես կրոնավորի» հայրն էր<sup>17</sup>: Հ. Աճառյանի հավաստմամբ՝ Սանասար և Բաղդասար անձնանունները միաժամանակ, առաջին ու միակ անգամ հանդիպում են 1235թ. վիմագիր հիշատակարաններում:

Մեր կարծիքով ժողովրդական վեպի ասացողների խոր ազդեցություն տակ էլ Խուլպասարի մեջ ցանկություն է առաջացել իր գավազներին կոչելու հայոց դյուցազուհիների անուններով, որը միանգամայն բնական պիտի համարել նոր կենցաղը յուրացրած և հայ գուսանական երգերով ու զրույցներով սնված երբեմնի այլազգու, տվյալ պահին՝ հայացած ու քրիստոնյա դարձած զփչաղ գորավարի համար:

Խուլպասարն ապրում էր սկզբներում՝ Գուգարք - Տաշիրում, իսկ վերջերում՝ Շիրակում: Հայ ժողովրդական վեպի հետազոտողների հավաստիացմամբ՝ վեպի պատումներն Արևելյան Հայաստան են թափանցել XVIII դարից հետո միայն: Այդ դեպքում հնարավոր բան է, որ շուրջ վեց դար առաջ Արևելյան Հայաստանի բնակչությունը, նրանց մեջ և Խուլպասարը հաղորդակից դառնար «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի հերոսների անուններին ու սխրանքներին: Հառիճո վանքի խնդրո առարկա արձանագրությունը հուշում է մեզ, որ ժողովրդական վեպի թափանցման հնարավորություններ և ուղիներ իսկապես առկա են եղել XI-XII դդ., և հենց Հոռիում, Շիրակում ու հարևան գավառներում պատմվել և տարածվել, անգամ նոր միջազգայնորով հարստացել են «Սասնա ծռերի» պատումները,

16 Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Հ. Դ, Երևան, 1943, էջ 390-391: Երրորդ Սանասարի մասին տեղեկություններ տե՛ս նաև Մ. Ս մ բ ա տ յ ա ն. Երնջակ, Տփղիս, 1904, էջ 147:

17 Նույն տեղում, Հ. Ա, 1942, էջ 375-376: Աճառյանի սկզբնաղբյուրը Ղ. Փիրղալբեմյանցի «Նոտարք հայոց» ժողովածուն է, Կ. Պոլիս, 1888, էջ 136:

իսկ զփչազ զորավարի գործունեությունը ծավալվել է հենց այդ աշխարհագրական ու ազգագրական շրջաններում:

## 6

«Սասնա ծռերի» պատումների մեջ առկա են Վրաստանին ու Լոռուն առնչվող մի քանի միջադեպ ու անուններ (մարդկանց և վայրերի): Տակավին Գ. Սրվանձտյանցն ուշադրություն է հրավիրել Կապուտկողի վրա, որը իմանալով ծննդավայրն էր, այնուհետև՝ Կաղզվան գավառի, ուր գտնվում էին «Խանտուտի ձորը» և «Խանտուտի բերդը» (որը մի ժամանակ ենթակա էր վրաց իշխանությանը), դրանց հետ կապելով նաև էպոսի հերոս լուսնի փահլեան Համգային<sup>18</sup>: Իսկ Մ. Աբեղյանն առաջ անցնելով Արևելյան Հայաստանի Լոռի և Ապարան ընաշխարհներում մատնանշում է վայրեր, որոնք մուտք են գործել «Սասնա ծռերի» պատումներում և կամ կապված են վեպի հերոսներից ոմանց գործունեության հետ (Դավիթ, Փոքր Մհեր): Նա գրում է. «Հետաքրքիր կլինեն, մանավանդ, Լոռվա պատում ունենալ, քանի որ Լոռին իր փահլեաններով դուրս է դալիս վեպի պատումների մեջ: Ըստ մի պատմի ասացողի՝ Արարանի և Լոռվա մեջ ցույց են տալիս մի սարահարթ՝ «Չանգուվա դուրան» իբրև այն տեղը, ուր Դավիթը Լոռվա Համգա փահլեանի դեմ կռիվ գնալիս՝ հանդիպում է Սուրբ Սարգսին, ուր և իմանալով նու Դավիթը մենամարտում են»<sup>19</sup>:

Կաղզվանի գավառը պատահականորեն չի մատնանշվում. մասնավորապես XI–XII դդ. այն տնտեսական ու մշակութային կարևոր հանգուցակետ էր, որի վրայով անցնում էին ճանապարհներն ինչպես դեպի արևելք ու հարավ՝ Բագրևանդ, Տարոն, Վասպուրական և այլն, այնպես էլ դեպի արևմուտք և հյուսիս՝ Կարս, Անի, Շիրակ, Աշոցք, Լոռի, անգամ Սյունիք և Ախալցխա: Կաղզվան գավառում էր գործում հին օրերի հռչակավոր մենաստաններից մեկը՝ Թաթլո վանքը, որի սրբակենցաղ միաբանների հրաշագործությունների համբավը տարածված էր Հայաստանի ամենահեռավոր աշխարհներում<sup>20</sup>:

18 Գ. Սրվանձտյանց. Գրոց ու բրոց. Կ. Պոլիս, 1874, էջ 129: Ղ. Ինճի-ճեան. Աշխարհագրություն. էջ 120:

19 Մ. Աբեղյան. Երկեր, Ա, էջ 329:

20 Այս վանքի սրբություններից էին Գրիգոր Լուսավորչի և Գրիգոր Սքանչելագործի մասունքները, որոնք ժողովել ու այստեղ էր փոխադրել Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ Երկրորդը: Թաթլո վանքում էր պահվում նաև մի հռչակավոր խաչ՝ Ջարեհանի սուրբ Նշանը, որը ժամանակ անց փոխադրվել է Ախալցխա (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Ախալցխայի հոգևոր կյանքը XII–XIX դարերում» ձեռագիր աշխատության մեջ): Իսկ Հուլավո խանի տիրապետության շրջանում, XIII դարի կեսերին, Օրբելյան Սմբատ իշխանը՝ մեծ ղեկավարությամբ ձեռք բերելով Լուսավորչի և Սքանչելագործի մասունքների մի մասը՝ փոխադրում է Նորավանք: Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, էջ 415:

Կաղզվանում գործում էր, այնուհետև, քաղկեդոնիկ հայերի մի մեծաստան՝ Չանգլին, որպես հետևանք գաղափարական ու գավառա-նական նոր հովերի և ազգային եկեղեցու երկփեղկման, որի միաբանները համակիրներ ունեին Անիում, Կարսում և Լոռիում<sup>21</sup>:

Այս ամենն անվիճելի են գարձնում տակավին XI–XII դդ. առկա չփումները և ուղիները՝ հայ ժողովրդական վեպի՝ Արևելյան Հայաստան ներթափանցելու հետ կապված: Պատմութունից հայտնի է, որ XI դարի կեսերից ու հետո պատմական Սասունից, Տարոնից ու Վասպուրականից Արևելյան Հայաստան՝ Մահկանաբերգ, Խոթոռնի և Դսեղ են փոխադրվում նախարարական հին տների ճյուղեր՝ Մամիկոնյաններ, Բագրատունիներ ու Արծրունիներ, նաև՝ ավելի վաղ չըջաններից անջատված և հետագայում հռչակված Զաքարյանների տոհմը: Մամիկոնյանները հաստատվում են Դսեղում: Նրանց մեծագործութունների մասին պատմում են Բարձրաքաչ Ա Գրիգոր մեծաստանի պատերին փորագրված արձանագրութունները, որոնց համաձայն՝ Մամիկոնյան առաջին իշխանը (կամ նրանցից մեկը) կոչվել է Համազասպյան («Համազասպեան յազգէ Մամիկոնեանց»), նրա որդին՝ Սարգիս, վերջինիս որդիները՝ Մարծպան կամ Մարզպան (կինը՝ Մամբան) և Սմբատ (կինը՝ Նրճիս), զավակներ են թողել նաև վերջիններս. Սմբատի որդուն կոչել են Համլիկ, Մարզպանի որդիներն ավելի շատ էին և ապրում էին XIII դարի 10–20-ական թթ.: Լոռու Մամիկոնյանների ազգատոհմը ծանոթ է նաև Կիրակոս Գանձակեցուն, մինչ հիշում է Արաղածի փեշերին ընկած Վարդենիս գյուղի ազգով հայ և քրիստոնյա Քուրդ իշխանին ու վերջինիս կնոջը. «Կին նորա Խորիչա՛հ՝ յազգէ Մամիկոնէից դուստր Մարզպանայ, քոյր Ասլան բեկին և Գրիգորոյ», իսկ այլուր՝ «Գրիգոր իշխան, որդի Մարզպանին, եղբայր Ասլանբէկին, Սարգսի և Ամիրային, յազգէ Մամիկոնէից»<sup>22</sup>:

Զաքարյան-Երկայնաբազուկների նախնիները՝ գարեր առաջ անջատվելով Արծրունյաց նախարարական տնից՝ փոխադրվել էին հարավ և հաստատվել ազգազրական նոր միջավայրում՝ Կորճայքի Կարթունիք գավառում:

1965թ. Ամբերդի եկեղեցու արևմտյան մասում, պեղումների ժամանակ հայտնաբերված արձանագրության մեջ, արաբերեն գրերով, Զաքարյան եղբայրներն իրենց կոչում են Արծրունիներ, այսինքն՝ Արծրունյաց նախարարական տան պայազատներ. «Ամիր սպասալար Զաքարիա,

21 Հանգամանորեն տե՛ս Պ. Մ ու ը ա գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 65–86:

22 Կ ի ը ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութուն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 272 և 365: Մամիկոնյանների այս ճյուղի տոհմաձագը կազմել է հայագետ Հ. Քյուրգյանը: Այս Մամիկոնյաններից է սերում հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

Իվանե Արծրունիներ»<sup>23</sup>: Պատճառը դժվար է կռահել. Ջաքարյան տոհմի հին նախնիներն Արծրունյաց նախարարներից էին, որոնք ժամանակի ընթացքում այնքան էին հեռացել, որ խնամիական կապեր էին հաստատում միմյանց հետ: Ինչպես Կիրակոս Գանձակեցին է վկայում՝ «Մեծ իշխանն Իւանէ, եղբայր զօրավարին Վրաց Ջաքարէի՝ որդիք քեռ բարեպաշտ իշխանին Քրդին, որ ընդ այն ժամանակս իշխէր բերդին Կայենոյ և դաւաւաւին»<sup>24</sup>: Պատմաբանների հավաստմամբ՝ նրանց մոր անունը Սահակադուխտ էր, պապինը՝ Վահրամ Արծրունի<sup>25</sup>:

Եղբայրների հաղթանակների մասին պատմող մեկ այլ վիմագիր հիշատակարանում էլ, որը փորագրված է Ջաքարե ամիրսպասալարի մահից հետո, Հաղարծինի վանքի պատերի վրա, XIII դարի 10-ական թթ., Ջաքարյանները համարվում են Բագրատունյաց թագավորական տան շառավղիներ. «Այս մեր գիր յիշատակի է և արձան մշտնջենաւոր որգեաց մեծին Սարգսի յազգէ Բագրատունեան Իվանէի և Ջաքարէի»<sup>26</sup>:

Ուշադրութեան արժանի է, որ այս վկայութեան հեղինակը ամիրսպասալար Ջաքարեի եղբայրն է՝ Իվանեն: Պատմաբաններն էլ, իրենց հերթին, աշխատել են հիմանվորել Բագրատունիների և Ջաքարյանների կապը անուղղակի փաստերով<sup>27</sup>:

23 А. А. Х а ч а т р я н. Корпус арабских надписей Армении VIII-XVI вв. Вып. I, Ереван, 1977, с. 47, 166 и таблица III.

24 Կ ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. էջ 210:

25 Ս. Երեմյան. նշվ. աշխ.:

26 Ս. Ջ ա լ ա լ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 131, նաև՝ Հ. Շ ա հ ի ա թ ու ն յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 370: Դիվան հայ վիմագրության, պրակ VI, էջ 22: «Ազգին Բագրատունեան» և Ջաքարյանների առնչութիւնների մասին է վկայում նաև XII դարի 90-ական թթ. Սանահնի կամրջի մոտ կանգնեցված խաչքար-կոթողը, որի արձանագրութեան սկիզբը, ցավոք, ջարգել են Աղա Մամադ խանի հրոսակները 1795թ., և այդ պատճառով միտքը որոշ է է. «...ազգին Բագրատունեաց: Ես՝ Վանենի, դուստր իշխանաց իշխանին Սարգսի, որդո Ջաքարէի, կին Աբասա թագաւորի, որ կիսարե վախճանեալ խաւարեցոյց զմեզ, շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ մխիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց»: Եղբայրները Ջաքարե ամիրսպասալարն ու Իվանեն են (Կ. Ղ ա ֆ ա դ ա ղ ա յ ա ն. Սանահնի վանքը և նրա արձանագրութիւնները. Երևան, 1957, էջ 185-186: Հին աղավաղված հրատարակութիւնների մասին նույնպես տե՛ս այստեղ):

27 Ըստ Ասլան Շահնազարյանի, որի կարծիքը բաժանում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, «Ջաքարյանները Ձորագետ գաղթելուց հետո խնամութիւն էին ունեցել Կյուրիկյան Բագրատունիների հետ և նրանց ազգականներն են եղել իգական գծով»: Կարապետ Եպիսկոպոսն էլ, ընդհակառակը, հավատացնում է, որ նրանք սերված պիտի լինեն «Կիսաքուրդ Մոկաց երկրի կամ Տարոնի Հայ Բագրատունիներից»: Իսկ Վրաց ժամանակագրութիւնը արձանագրում է, որ ամիրսպասալար Ջաքարեն նստում էր «Հայոց թագավորի տեղում և Լոռիի տերն էր»: Նշանակում է՝ Ջաքարյան տոհմի կապերը Բագրատունյաց թագավորական տան հետ ավելի քան որոշակի են, չենք ասում արդեն, որ հաստատվելով Լոռիում՝ նրանք շարունակողները դարձան Կյուրիկյան Բագրատունիների թագավորութեան: Ջաքարյանների տոհմագրութեան նորագույն քննութիւն կատարել է Հ. Գ. Մարդարյանը:

Այսպիսով ժառանգելով թագավորական երկու նշանավոր տոհմերի՝ Արծրունյաց և Բաղրատունյաց ավանդները, Ջաքարյան եղբայրները իրավունք ունեն կոչվելու «Թագավորք Հայոց», ինչպես այդ վկայում են Անիի վիմագրերը, և առիթը նրանց մայրը՝ Սահակղուխտն է<sup>28</sup>:

Արծրունյաց իշխանների գաղթի ժամանակը գեպի Լոռի պարզ հայտնի է, սակայն սկզբնաղբյուրներից ծանոթ է, որ առնվազն XII դարի սկզբներին նրանք այս երկրամասում էին, նրանց էին պատկանում Մահկանաբերգը, Կայնո գավառը, Հաղբատը, և սերտ շփումների մեջ էին հայու վրաց իշխանների հետ: Հռչակված էր հատկապես Քուրդ իշխանը, որը դառնացած վրաց թագավորներից՝ հեռանում է Բարձր Հայք և հաստատվում Կարին քաղաքում, բայց Թամարի թագավորության ժամանակ հետ է կանչվում և կրկին տեր դառնում իր կալվածքներին՝ «Կայենո աշխարհին, Մահկանաբերդին», ստանում նոր անձնաշնորհումներ: Քուրդ իշխանն ուներ երկու որդի՝ Դավիթ ու Սագուն (թե՞ երեք, նաև՝ Ամիր Սարդիս), և երկու դուստր՝ Արդու խաթուն, որն ամուսնացած էր Հաթերքի Վախթանգ իշխանի հետ, և Սահակղուխտ, որն, ինչպես ասացինք, Ջաքարյան Սարդիս մեծ իշխանի կինն էր: Սագունի որդուն կոչում էին Շերբարոք, իսկ վերջինիս որդուն՝ դարձյալ Սագուն, որն իր բնական կարողությունների շնորհիվ՝ փաստորեն դառնում է Վրաստանի տիրակալ (խնամակալ), իսկ հետագայում թաթարների կողմից նշանակվում է Սասունի իշխան<sup>29</sup>:

Մ. Աբեղյանն ևս ուշադրություն է հրավիրել այս իշխանական տան գաղթի ու նրանց ժառանգների գործունեության վրա՝ կապելով հայ ժողովրդական վեպի որոշ միջադեպերի հետ, մինչ անդրադառնում է կրտսեր Սագունի անձին ու գործին, որը հռչակվել էր Սասունի հետ կապված իր հաղթական կռիվներով. «Արդյո՞ք Քուրթ իշխանի տոհմն իսկապես Սասունի իշխանական տոհմից է՞՝ հյուսիս գաղթած և կալվածների տեր դարձած, և որոնց սերունդ Սագունը դարձյալ տեր է դառնում Սասունին, — հարց է տալիս նա և շարունակում պատասխանել: — Սասունցոց ցեղից դեպի արևմուտք՝ Կիլիկիա էլ կան գաղթածներ. անհավանական է, որ Հյուսիսային Հայաստան ևս գաղթած լինեն: Գանձակեցին «հատուածեալ ի քրթագ» ղնում է նշանավոր Ջաքարեի և Իվանեի նախնուն, որոնք և վերոհիշյալ Քուրթ իշխանի քրոջ որդիքն են: Ինչպես էլ լինի, պետք է ընդունել, որ Սասունի իշխանները վրաց տիրապետության ժամանակ այդպիսի մի դեր կատարել են, քանի որ մեր վեպի մեջ Դավիթը գնում է, Գյուրջիստան տիրում. Մհերն իշխում է Գյուրջիստանում և այնտեղից

28 Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի. Երևան, 1966, էջ 57, XX: Արձանագրությունը մոր հիշատակը հավերժացնելու համար որդիների կառուցած եկեղեցու ներսում է, սվաղի վրա. «Սուրբ եւ մեղսաքաւիչ պատարագն, որ սմա կատարի, Սահակղիտո է՝ ծնաւղի Ջաքարէա եւ Իւանէի, թագաւորաց Հայոց»:

29 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 208-209, 215 և 386: ՄՄ, ձեռագիր N 1519:

գալիս Սասուն և կովում Կոզբազնի կամ Մսրա Մելիքի թոռների դեմ և մինչև իսկ Հալեպ ու Բաղդադ գնում, որ, անշուշտ, հիշողություն է հայ իշխանների և Սասունի Սագուն իշխանի ծառայելուն թաթարների ռանակի մեջ, Բաղդադի խալիֆայի և էտլյան հարստության դեմ վարած կռիվների ժամանակ»<sup>30</sup>:

Բագրատունյաց իշխանների գաղթի մասին չենք ուզում խոսել, որովհետև նրանք մի ժամանակ տեր էին և տարածված ինչպես Շիրակում ու Հյուսիսային Հայաստանում, այնպես էլ Տարոնում ու Սասունում:

## 7

Մամիկոնյանները, Արծրունիները, Բագրատունիներն ու Զաքարյաններն իրենց պատմական հայրենիքից՝ Սասունից, Տարոնից ու Վասպուրականից փոխադրվելով Լոռի, անշուշտ, միայն ընտանիքի անգամներով ճանապարհ չեն ընկել: Նրանք իրենց հետ բերել են կամ գաղթեցրել նաև ծառաներին ու հարկատու շինականներին (որոնց մեջ քիչ չէին հողի ու աշխատանքի մարդիկ), իրենց գորքը, նաև՝ հոգևորականներ ու գուսաններ<sup>31</sup>: Ե՛վ հին, և՛ այս նոր հայրենիքում նրանք ապրել են գրեթե նույն կենցաղով, չեն մոռացել որսն ու վայելչությունները, իրենց գուսաններին շարունակաբար երգել ու պատմել տվել տոհմային զրույցներն ու ավանդությունները, ոգևորվել ու խանդավառվել հին վիպասքներն ունկնդրելիս: Չմոռանանք, որ Բագրատունյաց, Արծրունյաց և Մամիկոնյան արքաների ու իշխանների գործերն են ազդակ ու ակունք դարձել ժողովրդական վեպի ասացողների աշխարհաճանաչողության և իմացությունների, նաև նախատիպերը մի շարք հերոսների: Նկատի ունենք, առաջին հերթին, Արծրունյաց Գագիկ թագավորին, Մամիկոնյան Մուշեղ իշխանին, Տարոնում ու Սասունում հռչակված Բագրատ Բագրատունի իշխանին, նրա որդի Դավիթ Բաղրատունուն և եղբոր որդուն՝ հռչակավոր Խուսթեցի Հովնանին: Այս հարցերը մանրամասնորեն քննված են Մ. Աբեղյանի աշխատություններում, և կրկնելն անհրաժեշտ չենք համարում<sup>32</sup>:

Այսօրինակ իրադրությունների շնորհիվ և նշված ճանապարհներով «Սասնա ծռերի» դրվագներն ու հերոսները գտել են իրենց նոր ու-

30 Մ. Աբեղյան. Երկեր, Ա, էջ 370-371:

31 Մասնավորապես, Զաքարյանների վերաբերյալ՝ այդ իրողությունը հաստատում է ուշ միջնադարի մատենագիր Զաքարիա Քանաքեռցին, մինչև նկարագրում է նրանց գաղթը դեպի Հյուսիս. «Ի երկրին Բաբելացոց այր ոմն քրիստոնեայ Զաքարիա անուն կարգեալ իշխան յազգէն Մարաց, և վշտացեալ ի նոցանէ... դտեալ ժամանակ, առնու ամենայն ընդոճինս, ծառայս և աղախինս, ախիւ բանակի իւրոյ... գայ մեղմով և մտանէ ի սահմանս Հայոց» և այլն (Զաքարեայ սարկաւազի Պատմագրութիւն. Վաղարշապատ, 1870, հ. Գ, գլուխ Ը, էջ 11):

32 Մանրամասնությունները տես Մ. Աբեղյանի «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության «Պատմական հիշատակություններ Սասունի և շրջակա իշխանությունների մասին» և «Վեպի պատմականությունը» գլուխներում (նույն տեղում, էջ 354-380):

նկնդիրներին և ազգագրական ու աշխարհագրական նոր միջավայրում ոգևորել մարդկանց ու գարձել սիրելի: Գուսանները մշտապես իշխանական ապարանքներում փակված չէին լինում: Ազատ ժամանակները նրանք շրջում էին մոտակա գավառներում ու բնակավայրերում, Գուգարաց ու Հարևան ընաշխարհներում, ձեռք բերում նոր ունկնդիրներ, հանրության ավելի լայն շրջաններին պարգևում հոգևոր սնունդ, անգիր դպրության ավանդներով շաղկապում միմյանց հետ ազգային վեպի պատմական հայրենիքի ու նոր հանգրվանների, այսինքն՝ արևելահայության լայն զանգվածների: Վեպը ոչ միայն պատմվել է այստեղ, այլև հարստացել նոր միջադեպերով, որոնց մասին խոսում է Մ. Արեղյանը:

Տարիներ շարունակ ապրելով այս նույն միջավայրում և չփվելով Լոռիում հաստատված իշխանական վերոհիշյալ տների ներկայացուցիչների հետ, հյուրընկալվելով ու հյուրասիրվելով նրանց տներում՝ խուլասարը բազում հնարավորություններ ուներ ոչ միայն ծանոթանալու վերջիններիս կենցաղին ու սովորություններին, այլև անապակ աղբյուրից առնելու հոգևոր սնունդ՝ միտքն ու հոգին հարստացնելով հայ ժողովրդական բանահյուսության հոգեպարար նմուշներով, լսելու ու ոգևորվելու «Սասնա ծռերի» պատումներով: Գուսանների ու ասացողների երգերից ու վիպասքերից էլ խանդավառված՝ խուլասարը որոշել է իր որդիներին կոչել ժողովրդական վեպի Առաջին ճյուղի հերոսների՝ Սասնասարի ու Բաղդասարի անուններով:

Բանահյուսական ժանրերի տեղաշարժն ու գաղթը իրենց երբեմնի հայրենիքից հարյուրավոր մղոններով հեռու ընկած աշխարհագրական ու ազգագրական նոր միջավայրեր՝ ծանոթ երևույթներ են հայոց հոգևոր մշակույթի պատմության մեջ: Ավելի վաղ, XI դարի առաջին կեսին, նույն ձևով Վասպուրականից Փոքր Հայք՝ Սեբաստիա ու հարակից շրջաններ և Ակն քաղաք են հասել ժողովրդական ու գուսանական անմահ երգերը՝ հայրեններն ու անտունիները, որոնք բուռն զարգացում են ապրել այստեղ և հասել մայրամուտ: Այդ երգերի փշրանքները XIX դարի վերջերին խնամքով հավաքեց և սերունդներին հանձնեց Գևորգյան ճեմարանի տաճկերենի ուսուցիչ Հովսեփ Ծանիկյանը<sup>33</sup>: Նույնն է կատարվել նաև «Սասնա ծռեր» էպոսի հետ: Նրա պատումների մեծ մասը կարող էր առհավետ կորչել, եթե XIX դարի 20-ական թթ. սկսած և առավելապես Մեծ Եղեռնից հետո տեղի ունեցած պարբերական գաղթերը Սասունի, Մոկսի, Տարոնի, Ալաշկերտի հայության բեկորները չհասցնեին Արևելյան Հայաստան, որոնք իրենց նոր բնակավայրը հիմնեցին Արագածի լանջերին, Արարատյան գաշտում և Գեղարքունյաց գավառում՝ իրենց հետ բերելով նաև հայ ժողովրդական վեպի տասնյակ պատումները և անգիր դպրության սքանչելի հուշարձաններ: Մահից հրաշքով փրկված և նոր հայրենիք գտած

33 Տե՛ս նրա «Հնությունք Ակնա» ժողովածուն, Տփղիս, 1895:



ասացողների շնորհիվ գրի առնվեցին ու կորստից ընդմիջտ փրկվեցին «Սասնա ծռերի» պատումները:

Մեր եզրահանգումների օգտին է խոսում նաև առանձնակի գործածվող Սանասար անձնանունը, որը հանդիպում է դարձյալ ազգագրական - աշխարհագրական նույն շրջանում՝ Լոռիում, նույն XIII դարում: Դրա ապացույցը Նոյեմբերյանի շրջանի Կողբ դյուղի գերեզմանոցում 1245թ. Սարգիս քահանայի կանգնեցրած խաչքարի արձանագրությունն է. «Պարոն Սանասար որդի Խաթուլի, լեր բարեխալս առ Քրիստոս»<sup>34</sup>: Սանասարի անվանը կից պարոն մակդիրը մտածել է տալիս, որ հայր ու որդի հասարակ մահկանացուներ չեն եղել, գուցեև տվյալ երկրամասի ավագանուց և սերտորեն կապված Արծրունյաց ու Զաքարյան իշխանական տների հետ, որոնց միջավայրում կենդանի ու սիրելի էր «Սասնա ծռեր» հերոսական վեպի կերպարների հիշատակը:

## 8

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպի առաջին արձագանքներից պիտի համարել Սասուն տեղանունից ծագած արական և իգական անունները՝ - Սասնա, Սասնո, Սասուն տարբերակներով, որոնց գործածությունը նույնպես սկսվում է XIII դարից և ավելի լայն տարածքում՝ Լոռիից ու Շիրակից մինչև Գեղարքունիք ու Արցախ: Հ. Աճառյանի բառարանում հաշվառված են այդ անունը կրող տասից ավելի անձինք: Հիշենք ամեն բնաշխարհից մեկ-երկուսին.

Սասնա (1229թ.)՝ որդի իշխան Խավրասի, որը Բագնայրի նշանավոր Ավետարանի պատվիրատուն է (1232թ.):

Սասնա (1241թ.)՝ որդի Տուտիկի, որի հիշատակը հավերժացնելու համար ծնողները կանգնեցրել են Հովհաննաձորի Ս. Երրորդություն տաճարը (Գուգարքում):

Սասնո (1242թ.)՝ որդի Ասլանափիի, որը կնոջ՝ Ռուսուքանի հետ նվիրաբերումներ է արել Հաղբատի վանքին:

Սասնո (1251թ.), որի տապանաքարը գտնվում է Գանձակի Սուլուկ դյուղի հանգստարանում:

Սասնա (1266թ.)՝ որդի Մեծկողմանց իշխան Հասանի, որն Ավետարան է նվիրել Եղիշե առաքյալի վանքին (Արցախ):

Սասնա (1271թ.)՝ ծագումով հանդարերդցի, որը նվերներ է արել Գանձասարի վանքին (Արցախ):

Սասուն (թե՞ Սասան, 1265-82թթ. միջև), որը եղբայրների հետ կառուցել է Սոթից Ս. Աստվածածին եկեղեցին (Գեղարքունիք) և այլն<sup>35</sup>:

34 Մառը և հայագիտության հարցերը. Երևան, 1968, էջ 144 (Ս. Ավագյանի հոդվածը):

35 Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 399-400:

Սասնո (Սասուն) անձնանունը կրող վերոհիշյալ անձնավորություններից ուշադրության է արժանի մասնավորապես առաջինը՝ Խավրասի որդի Սասնան, որը վախճանվել է երիտասարդ հասակում («Տղայ հասակա»), հաղիվ ամուսնացած: Մայրը՝ չկարողանալով տանել որդու կորստյան վիշտը՝ երկու տարի անց միացել է նրան: Խավրասը կնոջ և որդու համար հանգստարան է ընտրել Բագնայրի մենաստանը: Անձամբ ինքը՝ Խավրասը, նշանավոր դեմք էր, որդին Ամիր Աարդսի, իսկ վերջինս՝ Ջաքարե և Իվանե իշխանների քեռին և Ամիր Քուրդ Արծրունի իշխանի թոռը: Նա ևս վրաց Բաղրատունիների թագավորության մեջ բարձր պաշտոնների էր հասել՝ «Իշխեցող և հրամանատար ամենայն իշխանաց և զլխաւորաց տան թագաւորութեան» (Մսախուրթախուլցես)<sup>36</sup>:

Արծրունյաց և Ջաքարյան իշխանների հետ ազգակցական ու գործնական կապերը, ընտանեկան նվիրական ավանդությունների պարտազրանքն են եղել, ի վերջո, պատճառը, որ Խավրասը Սասուն տեղանունը, որտեղից նրա նախնիներն էին գաղթել, ընտրեց որպես անդրանիկ գավազի անուն և մկրտությունը հավերժացրեց: Նշանակում է՝ Սասունից գաղթելուց դարեր հետո էլ վերոհիշյալ իշխանների գերդաստանում վառ էին բնօրրանի հետ կապված հիշողություններն ու հպարտությունը հերոս նախնիների մեծագործություններով, հետևաբար, անմեռ սլահելու համար այդ գավազներին կոչում էին Սասուն (Սասնա), սովորույթ, որ բնորոշ է հայ իրականությանը նաև այսօր, ապացույց՝ Անի, Արարատ, Շիրակ, Նարեկ, Տաթև և Տաթևիկ, Սևան և այլ անձնանունները:

Հայտնի է, վերջապես, Սաւնա անունով մի տիկին՝ Հաղբատի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի մայրը, որին հանդիպում ենք Սանահնի վանքին 1271թ. արած նվիրաբերումների առթիվ: Հովհաննես արքեպիսկոպոսն այդտեղ հիշում է ծնողներին. «Հաւրն Վաչէի եւ մաւր՝ Սասնաին»<sup>37</sup>: Նա գործում էր կրտսեր Սագուն Արծրունի իշխանի հովանավորությունում և, ինչպես թելադրում են Հաղբատի և այլ վիճագիր հիշատակարանները, ծագում էր իշխանական տոհմից, Ջաքարեի քրոջ՝ Դոփի թոռն էր: Եթե 1271թ. Հովհաննես արքեպիսկոպոսն արդեն հեղինակավոր հոգևորական էր, հարկավ, ոչ պակաս, քան 40 տարեկան, նշանակում է նրա մայրը՝ Սասնան, ծնված պիտի լիներ ամենաքիչը 60 տարի առաջ, ոչ ուշ, քան նույն դարի 10-ական թթ.: Հաղբատի վանքի մեծ գավթի գերեզմանների շարքում կա «Սասնա» անունով, թերևս կնոջ, մի տապանաքար. բացառված չէ, որ այդտեղ է իր հավերժական հանգիստն առնում Հովհա-

36 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 178-179, ՄՄ, N 1519 ձեռագրի հիշատակարանները: Խավրասը թաղված է Հաղբատի վանքի մեծ գավթում, Կյուրիկյան թագավորների և Արծրունյաց իշխանների գերեզմանների շարքում (տե՛ս Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. Հաղբատ, Երևան, 1963, արձանագրություն N 54, տապանաքար ԻԹ):

37 Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները. Երևան, 1957, էջ 118, լուսանկար 39:

ննես արքեպիսկոպոսի մայրը<sup>38</sup>, որն, անտարակույս, երկրամասի իշխանական տներին մեկի դուստրն էր և անվանակոչված՝ ավանդական նույն պատճառների թելադրանքով:

Ծանոթ է, այնուհետև, Ծովինար վիպական անունով մի տիկին, վերստին Արեւելյան Հայաստանում դրված ձեռագրերի հիշատակարաններից, ամենայն հավանականությամբ՝ XI դարից: «Տիկին Ծովինարը» հոգեմայրն է Կրոնավոր անսովոր անունով մի հոգևորականի<sup>39</sup>: Որովհետև հրատարակիչները չեն ճշտել համապատասխան ձեռագրի գրութայն թվականն ու վայրը, ուստի ավելորդ ենք համարում ենթադրություններով տարվել:

Խորհելու տեղիք է տալիս վիմագրերում հանգիպող Խաճիսաթուն կանացի անունը, որ տարրերակն է վիպական-դիցաբանական Խաճիսաթուն Խաթունի: Այս տիկնոջ մարմինը հանգչում է Սանահնի վանքի գրատան մուտքի առջև, նախագավթում, ամիրսպասալար Ջաքարեի քրոջ՝ Նրջիսի հարևանությամբ: Տապանաքարը թեպետև թվագրված չէ, բայց Կ. Ղաֆաղարյանի կարծիքով XIV դարից ուշ չէ: Ցավոք «Խանգիսաթուն» անունից բացի, հաջորդ երկու բառը դժվարհասկանալի են և հնարավորություն չեն տալիս կռահելու, թե ո՞վ է այս ազնվազարմ տիկինը, որովհետև հակառակ պարագայում՝ նրան տեղ չէին տա իշխանուհիների կողքին<sup>40</sup>: Այնուամենայնիվ՝ վիպական այս անվան գործածությունը Լոռիում, Ջաքարյանների շրջապատում, կովաններ է տալիս հոգուտ «Սասնա ծռեր» դյուցազնական վեպի՝ Արեւելյան Հայաստան թափանցելու ուղիների ու ժամանակի և նոր միջավայրում նրա թողած խոր ազդեցության մասին: Խանգիսաթուն ձևը ենթադրել է տալիս այդ անձնանվան անցած երկար ճանապարհի մասին, որի ընթացքում այն ենթարկվել է նկատելի փոփոխության, բայց և պահպանել վիպական շունչն ու բովանդակությունը:

Սանասար և Բաղասար, Սասնա (Սասուն), Ծովինար և Խանգիսաթուն (Խանգուլթ Խաթուն) վիպական անուններ կրող անձանց նույն Լոռիում և հարևան գավառներում ուղեկցում են Դավիթները: Վերջինները անասելի շատ են: Վիմագիր ու ձեռագիր հիշատակարանները պատմում են մի քանի տասնյակ Դավիթների կյանքի ու գործերի մասին՝ սերված ինչպես իշխանական տներին, այնպես էլ հասարակ դասին: Այս առատության գլխավոր պատճառը, անշուշտ, տեղի Բագրատունյաց (Կյուրիկյան) նույնանուն թագավորներն ու իշխաններն էին և Հին Կտակարանի Դավիթ

38 Տե՛ս նույնի «Հաղբատ», էջ 190, տապանաքար ԼԵ: Սասնա անունով այր ու կին բարեգործներ (նույն XIII դարից) ծանոթ են նաև Գոշավանքի, Սալահ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու և Մորո Չորո վանքի արձանագրություններից: Սասնա՝ կիճ պարոն Գրիգորի, Սասնեայ (հավանաբար, տիկին) և Սասնա՝ ամուսին Եուչկան (1197-1213թթ. միջև): Իսկ Դիլիջանի Մաթոսավանքի պատերին խաչքար է գետեղել Սանասար անունով մեկը (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ավագյան, Հ. Ջանփուլադյան, Երևան, 1977, էջ 66, 123, 144, նաև՝ 16):

39 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ գար, էջ 888, ՄՄ, N 6975 ձեռագիրը:

40 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 171:

մարզարեն: Առավելապես նրանք են պատճառ դարձել Դավիթ անվան գործածություն: Չի կարելի, սակայն, բացառել Հայ հերոսական վեպի ամենասիրված դյուցազնի՝ Սասունցի Դավթի ազդեցությունը, մանավանդ որ նրա հետ էին կապվում Արևելյան Հայաստանի աշխարհագրական անուններից մեկ-երկուսը՝ Լոռիում և Ապարանում ու այդ գավառներին և Հարևան Վրաստանին առնչվող դրվագներ Դավթի և Փոքր Մհերի ճյուղերում:

Վիսլական-դիցաբանական մեր քննած անուններն, ի վերջո, հետքերն են «Սասնա ծռեր» դյուցազնական վեպի պատումների, որոնք XI–XII դդ. սահմանագծում մուտք գործելով Արևելյան Հայաստան՝ իրենց անջնջելի նստվածքներն էին թողնում ավանդական թելերով վեպի հետ կապված իշխանական տների առօրյայում, այլև նույն միջավայրում ապրող Հայոթյան կենցաղի ու մտածողության վրա՝ ինքնաբերաբար հուշելով նրանց իրենց որդիներին ու դուստրերին տված նոր անուններով անմեռ պահել Հայրենի հիշատակները:

#### ПЕРВЫЕ ОТГОЛОСКИ ГЕРОИЧЕСКОГО ЭПОСА "САСНА ЦРЕР" ("САСУНСКИЕ БЕЗУМЦЫ") В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

Доктор филол. наук П. О. АКОПЯН

##### Р е з ю м е

Среди исследователей общепринято мнение, что армянский героический эпос, создаваясь и развиваясь в течение IX–XIII вв. в исторической области Сасун и проникая в последующие века в соседние области Багеш, Муш, Хлат, Буланух, а оттуда, в свою очередь, на север – в Арчеш, Кахзван, Алашкерт, лишь после XVIII в. распространился в Восточной Армении – в Эчмиадзинском уезде, на склонах горы Арагац и в бассейне озера Севан. Однако данные ономастики XII–XIII и последующих веков позволяют утверждать, что эпос "Сасна црер" был популярен уже в конце XII в. и его рассказывали в областях Лори, Ширак, Арцах и Гехаркуни. В лапидарных надписях и памятных записях армянских рукописей упомянутого периода встречаются названия местностей эпоса, имена эпических и мифических героев, как Санасар и Багдасар, парон Санасар, Цовинар, Ханд-Хатун (Хандут Хатун), Сасун, Сасна. Носителями этих имен являлись мужчины и женщины из княжеских родов Армении–Арцруни, Закарян Еркайнабазук, а также из их окружения, переселившиеся в XI–XII вв. из южных областей исторической Армении и, в частности, из самого Сасуна в Лори (Арцруниды – в Махканаберд, Закаряны – в Хожорни, Мамиконяны – в Дсех). В их среде жили и творили прототипы основных героев эпоса: Гагик Арцруни, Баграт и Давид Багратуни, Хутеци Овнан и другие. В истории XII–XIII вв. фигурирует военачальник Хупасар, язычник-кипчак, принявший армянскую христианскую конфессию, проживавший в окрестностях монастыря Арич, в тесном контакте с армянскими княжескими домами Закарянов и Арцруни; небезынтересно, что своих сыновей Хупасар крестил не библейскими, как было принято, именами, а именами армянских эпических героев Санасар и Багдасар. Вышеприведенные факты не только неоспоримо доказывают, что в период XII–XIII вв. в Восточной Армении рассказывали армянский героический эпос, а его сюжеты здесь были любимы в разных слоях населения, но и дают основание утверждать, что эпос оставил глубокий след в жизни и мышлении народа. Немаловажно также указать, что в ветвях эпоса встречаются герои и эпизоды, связанные с областями Восточной Армении (борец-пехлеван Хамза из Лори, встреча Давида и Св. Саркиса в Апаране и т.д.).